ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
«ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆՇԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ»

« 06 » փետրվարի 2020 ԹՎԱԿԱՆԻ

N *«ՀՀ ԼՄՎՔ-ԳՀԾՁԲ-20/13»*

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Վանաձոր **«24» փետրվար 2020թ.**

Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մ.Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պրոգրես լայն» ՍՊԸ-Ն, ի դեմս տնօրեն Ա. Ադիբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով « » փետրվարի 2020թ. N *«ՀՀ ԼՄՎՔ-ԳՀԾՁԲ-20/13»* պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված փողոցների նշագծման ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի գինը 2020 թվականի համար կազմում է 8050000 (Ութ միլիոն հիսուն հազար)ՀՀ դրամ.Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Լոռու մարզ Վանաձորի համայնքապետարան ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք ՀՎՀՀ՝ 06901936 Կենտրոնական գանձապետարան Հ/Հ՝ 900232551029 Համայնքի ղեկավար ----------Մ.Ասլանյան (ստորագրություն) Կ.Տ.	«Պրոգրես լայն» ՍՊԸ Ք: Հրազդան Կենտրոն 10/36 ՀՎՀՀ՝ 03020371 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հրազդան մ/ճ Հ/Հ 163158034856 Տնօրեն ----------Ա.Ադիբեկյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2
«06» փետրվարի 2020 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ-ԳՀԾՁԲ-20/13» ծածկագրով պայմանագրի
Համաձանագիր 1-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/505	ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆՇԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					5313000	8050000	8050000	8050000	8050000	8050000	8050000	8050000	8050000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզ Վանաձորի համայնքապետարան
ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք
ՀՎՀՀ՝ 06901936
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 900232551029
Համայնքի ղեկավար

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Պրոգրես լայն» ՍՊԸ
Ք: Հրազդան Կենտրոն 10/36
ՀՎՀՀ՝ 03020371
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հրազդան մ/ճ
Հ/Հ 163158034856

Տնօրեն ----------Ա.Ադիբեկյան
/ստորագրություն/
Կ.Տ